



Տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում վնասվել է Հաճախորդի ապահովագրված մեքենան, սակայն Ընկերությունը մերժել է հատուցել պատճառված վնասն այն հիմնավորմամբ, որ հերթական ապահովագրավճարի վճարումը չի իրականացվել: Հաճախորդը նշում է, սակայն, որ վճարման կատարումը կարող է հավաստել վճարման հանձնարարականը: Այսպիսով, Հաճախորդը հայտնել է իր անհամաձայնությունը Ընկերության դիրքորոշման վերաբերյալ, սակայն վերջինս չի փոխել այն՝ պատճառաբանելով, որ ապահովագրավճարի փոխանցման ժամանակ չի նշվել վկայագրի համարը: Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է Հաշտարարի գրասենյակ՝ նշելով, որ նախկինում ևս ապահովագրավճարներ փոխանցելիս երբևէ վկայագրերի համարներ չեն նշվել, սակայն փոխանցումները պատշաճ կարգով իրականացվել են:

Հաշտարարն ուսումնասիրել է գործի մանրամասները և պարզել, որ Հաճախորդի կողմից վճարումը կատարելիս որպես նպատակ նշվել է «ապահովագրավճար», սակայն չի նշվել կոնկրետ վկայագրի համարը, ուստի Ընկերությունը, սահմանված կարգի համաձայն այդ գումարն ուղղել է Հաճախորդի՝ նախկինում ունեցած պարտավորությունների մարմանը:

Հաշտարարն, ուսումնասիրելով կողմերի միջև կնքված պայմանագիրը և ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև մի շարք օրենսդրական ակտեր, պարզել է, որ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի չկատարել տ/մ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում տալու իր պարտավորությունը, եթե ապահովադրի կողմից նախատեսված ժամկետներում չի մուծվել *հերթական* ապահովագրավճարը կամ մուծվել է ոչ ամբողջությամբ: Պայմանագրով, սակայն, չի նախատեսվել ապահովագրավճարի պարբերական վճարում, այլ կերպ ասած՝ սահմանվել է, որ ապահովագրավճարը պետք է վճարվի միանվագ, իսկ միանվագ ապահովագրավճարի չվճարման դեպքում օրենքը չի նախատեսում ապահովագրողի իրավունքը՝ մերժել ապահովագրական հատուցման վճարումը: Օրենքը միանվագ ապահովագրավճարի չվճարման դեպքում Ընկերությանը հնարավորություն է տալիս միայն միակողմանի լուծել ապահովագրության պայմանագիրը, ինչից Ընկերությունը չի օգտվել:

Այսպիսով, Հաշտարարն եզրակացրեց, որ Ընկերությունը պարտավոր է տրամադրել ապահովագրական հատուցում:

Փաստորեն, Հաշտարարի միջնորդությամբ Հաճախորդի խախտված իրավունքները վերականգնվեցին: